

ՀԱՂՈՐԴՈՒՄ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Թումանյան համայնքի 2016թ.-ի տարեկան բյուջեն չորրորդ եռամսյակում կատարվել է եկամուտների գծով՝ 98,7 %-ով, նախատեսված 107019,1 հազ. դրամի փոխարեն փաստացի մուտքերը կազմել են 105608,8 հազ. դրամ: Սեփական եկամուտները (հարկային եկամուտներ և տուրքեր, ոչ հարկային եկամուտներ, եկամուտներ կապիտալ գործառնություններից) 23059,6 հազ. դրամի փոխարեն փաստացի մուտքերը կազմել են 21649,3 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 93,9%: Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիաներ) նախատեսված 83959,5 հազ. դրամը տրվել են ամբողջությամբ կամ կատարման տոկոսը՝ 100,0 %, այդ թվում՝ համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները՝ 79855,9 հազ. դրամ, որը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100,0%, այլ դոտացիան՝ 2403,6 հազ. դրամ, որը նույնպես տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100,0%, պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումները նախատեսված 1700,0 հազ. դրամը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100,0%:

1. Բյուջեի վարչական մասի եկամուտները

2016 թ-ի չորրորդ եռամսյակում բյուջեն վարչական մասով նախատեսված էր 105249,1 հազ. դրամ եկամուտ, փաստացի մուտքերը կազմել են 103838,9 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 98,7 % : Սեփական եկամուտները (հարկային եկամուտներ և տուրքեր, ոչ հարկային եկամուտներ) նախատեսված էր 23059,6 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 21649,3 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 93,9 %: Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիա) նախատեսված 82259,5 հազ. դրամը հազ. դրամը տրվել է ամբողջությամբ կամ կատարման տոկոսը՝ 100,0%, այդ թվում՝ համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները՝ 79855,9 հազ. դրամ, որը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100,0%, այլ դոտացիան՝ 2403,6 հազ. դրամ, որը նույնպես տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100,0% :

1) Հողի հարկ

Հողի հարկի գծով եկամուտները 2016 թ-ի չորրորդ եռամսյակում նախատեսված էր 9417,5 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 8726,9 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 92,7 %:

2) Գույքահարկ

Գույքահարկը համայնքի վարչական տարածքում գտնվող շենքերի և շինությունների համար նախատեսված էր 446,9 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 453,5 հազ. դրամ կամ կատարման տոկոսը 101,5%, իսկ փոխադրամիջոցների համար նախատեսված էր գույքահարկ 6951,7 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 7915,5 հազ. դրամ, կամ կատարման տոկոսը՝ 113,9 %:

3) Տեղական տուրքեր

Տեղական տուրքերի գծով եկամուտները չորրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված էր 749,0 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 789,3 հազ. դրամ կամ կատարման տոկոսը 105,4 %:

4) Այլ եկամուտներ

Այս եկամտատեսակը 2016թ-ի չորրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված էր 5424,5 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 3694,2 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 67.2 %, այդ թվում հողի վարձավճարը նախատեսված էր 4079,8 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմում է 3355,5 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 72,2 %, գույքի վարձակալության պլանը նախատեսված էր 86,0 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմում է 34,5 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 40,1 %, պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումը նախատեսված էր 5764,3 հազ. դրամ, որ փոխարեն տրվել է 4978,2 հազ. դրամ կատարման տոկոսը՝ 86,4%:

5) Պաշտոնական ընթացիկ տրանսֆերտներ

Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիա) նախատեսված 82259,5 հազ. դրամը հազ. դրամը տրվել է ամբողջությամբ կամ կատարման տոկոսը՝ 100.0%, այդ թվում՝ համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները՝ 79855,9 հազ. դրամ, որը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100,0%, այլ դոտացիան՝ 2403,6 հազ. դրամ, որը նույնպես տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100,0%:

2. Բյուջեի Ֆոնդային մասի եկամուտները

Բյուջեի Ֆոնդային մասի եկամուտները նախատեսված էր 1770,0 հազ. դրամ, այն տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100 %:

3. Բյուջեի վարչական մասի ծախսերը

Բյուջեի վարչական մասի ծախսերը չորրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված էր 105249,1 հազ. դրամ ծախս, փաստացի ծախսվել է 98040,9 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 93,2 %:

1) Ըստ գործառնական դասակարգման ծախսերը կատարվել են

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը 2016 թ-ի չորրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված 61146,0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 56929,1 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 93,1%:

Տնտեսական հարաբերությունների գծով ծախսերը նախատեսվել է 420,0, փաստացի ծախսը կազմում է 420,0 հազ. դրամ կատարման տոկոսը՝ 100,0 %, այդ թվում ճանապարհային տնտեսության համար նախատեսված էր 250,0 հազ. դրամ ծախս, փաստացի ծախսը կատարվել է 100,0%-ով, զբոսաշրջության համար նախատեսված էր 170,0 հազ. դրամ, որից տրվել է 170,0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 100,0 %:

Շրջակա միջավայրի պաշտպանության գծով ծախսերը նախատեսված էր 6580,0 հազ. դրամ,

փաստացի ծախս կատարվել է 6580,0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 100,0 %, այդ ծախսը կատարվել է համայնքի աղբահանությունը իրականացնելու համար:

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայության համար նախատեսված ծախսը կազմում է 3875,0 հազ. դրամ, փաստացի ծախսը 2629,9 հազ. դրամ է կատարման տոկոսը 67,9%, այդ թվում ջրամատակարարման համար նախատեսված է 1625,0 հազ. դրամ, այն տրվել է 727,4 հազ. դրամ կատարման տոկոսը 44,8 %, փողոցների լուսավորության գծով ծախսերը 2250,0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսվել է 1902,5 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 84,6 %:

Առողջապահության համար նախատեսված ծախսը՝ գումարով 300,0 հազ. դրամ, տրվել է ամբողջությամբ:

Հանգիստ, մշակույթ և կրոն դասակարգման համար նախատեսված էր 808,7 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմում է 343,7 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 42,5 % :

Կրթության համար 23380,0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 23090,0 հազ. դրամ, կատարման տոկոսը 98,8 %, այդ թվում նախադպրոցական կրթության համար նախատեսված էր 16275,0 հազ. դրամ, փաստացի կատարվել է 15985,0 հազ. դրամ ծախս կամ կատարման տոկոսը՝ 98,2 %, արտադպրոցական դաստիարակության համար նախատեսված էր 5660,0 հազ. դրամ ծախս, որի փաստացի ծախսը կազմել է 5660,0 հազ. դրամ կատարման տոկոսը՝ 100,0%, կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների համար նախատեսված էր 440,0 հազ. դրամ ծախս, փաստացի կատարվել է 440,0 հազ. դրամ ծախս կամ կատարման տոկոսը՝ 100,0%:

Սոցիալական պաշտպանության գծով ծախսերը նախատեսված էր 2770,0 հազ. դրամ, փաստացի կատարվել է 2770,0 հազ. դրամ ծախս կամ կատարման տոկոսը՝ 100,0%:

Պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումը նախատեսված էր էր 5764.3 հազ. դրամ, որ փոխարեն տրվել է 4978,2 հազ. դրամ կատարման տոկոսը՝ 86,4%:

2) Ըստ տնտեսագիտական դասակարգման 2016 թ-ի բյուջեն չորրորդ եռամսյակի ընթացքում կատարվել է

ա) Աշխատանքի վարձատրության համար նախատեսված էր 46990,0 հազ. դրամ ծախս, փաստացի կատարվել է 46404,3 հազ. դրամ ծախս կամ կատարման տոկոսը՝ 98,7%:

բ) Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման համար նախատեսված էր 16944,7 հազ. դրամ ծախս, փաստացի կատարվել է 11866,5 հազ. դրամ ծախս կամ կատարման տոկոսը՝ 70,0 %:

գ) Ընթացիկ դրամաշնորհները համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին՝ նախատեսված էր 30985,0 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 30695,0 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 99,1 %:

դ) Սոցիալական ապահովագրության ծախսերը՝ այդ թվում բյուջեից այլ նպաստները նախատեսված էր 3775,0 հազ. դրամ, փաստացի կատարվել է 3775,0 հազ. դրամ ծախս:

ե) Այլ եկամուտները նախատեսված էր 790,1 հազ.դրամ, փաստացի ծախսը կատարվել է 321,8 հազ.դրամ, կատարման տոկոսը՝ 40,7 %:

3. Բյուջեի ֆոնդային մասի եկամուտները

Բյուջեի ֆոնդային մասի եկամուտները առաջացել են հողի իրացումից՝ 24,0 հազ. դրամ, տարեսկզբի ազատ մնացորդից՝ 1924,4 հազ. դրամ և կապիտալ ոչ պաշտոնական տրանսֆերտներից՝ 1770,0 հազ. դրամ:

4. Բյուջեի ֆոնդային մասի ծախսերը

Թումանյան համայնքի 2016թ.-ի չորրորդ եռամսյակի ընթացքում բյուջեի ֆոնդային մասով նախատեսված էր 9482,7 հազ.դրամ ծախս, փաստացի ծախսը կազմել է 8620,2 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 90,9 %:

- 1) Վարչական սարքավորումների ձեռք բերման համար նախատեսված էր 1361,7 հազ.դրամ, փաստացի ծախս կատարվել է 694,8 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 51,0 %:
- 2) Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման համար նախատեսված էր 7891,4 հազ. դրամ ծախս, կատարվել է ծախս 7695,7 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 97,5 %:

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Լ.ԶԱՎԱՐՅԱՆ